

լոր գերբերում. բառի սկիզբը՝ կուգամ — գու-
քամ (թիֆլիս). բառի միջին. ընկեր — հըն-
գեր (Երևան). բառի վերջին. կնիկ — կնէյգ
(Ղարաբաղ): Այսպիսով կողովոցքը գնդախաչ
թարգմանենք թէ գանկախաչ՝ մենք նոյն բանն
ասած կը լինենք. քանի որ «կողովը» գունդ է,
իսկ «գունդը» — կունդ, այսինքն՝ գլուխ,
գանկ:

* * *

Փոխառութիւն է կողովոցքը՝ թէկուզ եւ
աղաւաղ, ինչպէս կարծում է Հ. Վ. Հացունի,
թէ՞ հայերէն բառ է եւ ոչ թէ հայտնած բառ.
որովհետեւ որեւէ արմատ կարող է սխալ առնու-
ուիլ եւ անանցներով աղբային կերպարանք ըս-
տանալ, ինչպէս օրինակ մարտիրոսանալ բայը,
որի բունը մարտիրոս յունարէն է, իսկ ան-ալ
անանցները՝ հայերէն: Մենք կարծում ենք, որ
թէ՛ խաղը եւ թէ՛ բառը փոխառութիւն չեն:
Սաղը համամարդկային է, ինչպէս կը տես-
նենք քիչ յետոյ, իսկ բառը հնդեւրոպական
ժառանգութիւն, որ փոփոխուել է հայ միջա-
վայրում:

Յունարէն կոլոֆոն բառը, որ վշուում է մեր
կողով-ին, թէեւ գլուխ չի նշանակում, բայց
իմաստակից է մեր բառին. նա նշանակում է
գագաք (լեբան), ծայր, կատարում, այսինքն՝
գործի վախճան, ինչպէս մեր կատարել բառը,
որ նշանակում է վերջացնել, սպանել. — «կա-
տարեցաւ» ստում են նահատակների համար.
Իսկ կատարը գլուխ է նշանակում, ինչպէս այս
ոճերում. «գլինին կատարն ընկաւ», «կատարը
տաք ա» (հարբած է): Յիշենք նաեւ աքաղաղի
կատարը եւսլին: Յոյն բառը նշանակում է նա-
եւ թէ՛ գործի պատրում եւ թէ՛ մի տեսակ խա-
ղաղնդակ: Բայց նա չի նշանակում տուփ, կո-
ղով, կու: «Կու» բառի դիմաց յոյներն ունին
koros, որ արմատակից է մեր կողով-ին,
բայց համարում է koreo բայից, որ նշա-
նակում է մաքրել, սրբել (համ. մեր «սրբան»
բառը, որ նշանակում է նստոյ տեղի, նստուկ):
Ասելս այն է, թէ մեր կողով, կոլով, կոռով ու
կոլով բառերի շարքը շատ անելի բազմազան
իմաստներ ունի, քան սովորաբար ունենում են
փոխ առած բառերը: Մեր բառերի բոլոր խնա-
միներին այստեղ հաւաքելը վախենում եմ թէ
ձանձրոյթ բերի, ուստի թողնում եմ ուրիշ
տեղ եւ ուրիշների համար ասելու: Բաւ է այս-

քանը յիշեմ, թէ իմ կարծիքով նոյն բառերն են
մեր կողովը եւ ուսաների golow-a որ նշանա-
կում է գլուխ: Այս բառը հիմա արտասանում
իրը galaw-a: Եթէ Ս. Մեսրոպը գրի առնէր
այդ բառի հին արտասանութիւնը՝ կը տանար
գողոք, որ կը լինէր մեր կողովը, իսկ եթէ
գրի առնէր նոր արտասանութիւնը՝ կը տա-
նար գաղաք, որ սրտի վշուք մեր կառափ բա-
ռին, որ ինչպէս գիտէք նոյնպէս գլուխ ու
գանկ է նշանակում: Կարծում եմ, որ կողովն
ու կառափը միեւնոյն բառերն են: Նշանակու-
թեամբ արդէն իմաստակից են: Գարով նրանց
ձեւին՝ մենք տեսանք մեր հնչիւնների լծորդու-
թեանց այն շարքը, որի տարազն է. գ — լ — ր
— ո: Մնում են այդ բառերի ձայնաւորները:
Սրդ՝ ո եւ ա լծորդ են, ինչպէս տեսնում ենք
բովանդակ եւ բուանդակ, գաւառական բախ-
տաւար եւ գրական բախտաւոր բառերից եւ Ե-
րեւանայ, Երեվանու հոլովական կերպերից,
ուր այ-ը ու է. ու քանի որ ու-ն ոյ է, ինչպէս
լոյս — լուայ, հետեւաբար այ եւ ոյ նոյնար-
ժէք են եւ ուրեմն ա-ը եւ ու-ն՝ լծորդ: Նկա-
տենք նաեւ, որ յունարէն kephale եւ լատին
caput, որ գլուխ են նշանակում, կշուում են
սանսկրիտ capala ձեւին, որ գանկ է նը-
շանակում*): Սրա բուն վշիւրը մեր ընդում
կարծում եմ ս-կառաակ բառն է, որ գանկի
վերին մասն է: Կարծում եմ նոյն բառը տառա-
շըրջուած՝ դարձած է calapa, ինչպէս մեր
կալուրջը՝ կալուրնջ, եւ այդ ձեւից են առջ
եկած մեր կառափը եւ ուսի golowa-ն:

Հիմա կարծում եմ լիովին պարզուած է թէ
ինչու մի խաղ, որի անունը յունարէն «Կեֆա-
լէ»ն է, այսինքն գլուխը, հայերէն կոչուում է
կողովոցք, այսինքն՝ մի բառ, որի բունը՝ կո-
ղով՝ նշանակում է գլուխ, գանկ: Կարծում եմ
պարզուած է նաեւ թէ ինչու Ոսկերեքանի
թարգմանիչը այդ բառն է գրել յոյն «Կեֆա-
լէ» բառի դէմ:

Բայց սա ի՞նչ տարօրինակ խաղ է, որի ա-
նունը գանկ է եւ գլուխ:

Իննութեան ստաննք մի քանի ոճեր, որ
գործ է ածում մեր ժողովուրդը՝ ստանց անդ-

*) Paul Regnaud, Gramm. Comparee du
grec et du latin, հատ. I, էջ 21: